

ՀԱՅՈՑ ԱՌԵՎՏՐԱՏՆՏԵՍԱԿԱՆ ՆԵՐԿԱՅՈՒԹՅՈՒՆԸ ԹԻՖԼԻՍՈՒՄ (ուշ միջնադար – 1918թ.)

Խաչատուր Դադայան

Առևտուրն ու արհեստներն ուրբանիստական երևույթ են, այդ իսկ պատճառով հայերը, որպես տնտեսական բազմադարյա ավանդույթների կրողներ, եղել են Թիֆլիսի բնակչության հիմնական տարրը. հողվածում բերված են սույնը փաստող բազմաթիվ վիճակագրական տվյալներ: Հայերն են եղել Անդրկովկասի «մայրաքաղաք» Թիֆլիսի տնտեսության նշանակալի ճյուղերի (առևտուր, ֆինանսավարկային ու բանկային գործ, արտադրական ու արդյունաբերական ձեռնարկություններ և այլն) ստեղծման առաջնեկներն ու աներկբա առաջատարները: Հողվածում ներկայացված են թիֆլիսաբնակ տասնյակ հայ ձեռնարկատերերի (այդ թվում՝ Ալ.Մանթաշյանցի) տնտեսական գործունեությունը լուսաբանող մեծաթիվ աղբյուրագիտական տեղեկություններ:

Վրաստանը և ի մասնավորի Թիֆլիսը հայերի համար ե՞րբ դարձան *մշտական բնակության վայր*:

Վախթանգ Գորգասար (Գուրգասյան) թագավորը Մհ. մայրաքաղաք դարձրած Թիֆլիսը բնակեցրեց հայերով: 632թ. Բերդի թաղում հայերը կառուցեցին Մհ.Գևորգ եկեղեցին: 1122թ. Դավիթ Շինարար թագավորը Անիից գաղթածների համար կառուցեց Գորի քաղաքը [1, էջ 77]: XIIդ. վերջերին Թիֆլիսի մելիքներ, այսինքն՝ կառավարիչներ, այսօրվա պատկերացմամբ՝ քաղաքագլուխներ, դարձան Մահկաբերդցի Արծրունյաց իշխանական տան ներկայացուցիչներ Վասակ և Քուրդ ամիրա եղբայրները [2, էջ 6]: XIIIդ. Թիֆլիս գաղթած կարնեցի Ումեկ վաճառականը մեծ պատվի արժանացավ վրաց արքունիքում և դարձավ արքայի թագավորահայրը: 1650թ. Ռոստոմ թագավորը հայ իշխան Բայանդուրին հանձնեց «իշխանությունը մեծ Տփիսիս քաղաքի», իսկ 1714թ. թագավորական հրովարտակով իշխան Բեհբությանն ստանձնեց Թիֆլիսի մելիքությունը, ինչը ժառանգական դարձավ այդ տոհմի համար (15 Բեհբությաններ մինչև 1801թ. հաջորդաբար վարեցին այդ պաշտոնը):

Ֆրանսիացի ճանապարհորդ Շարդենը վկայում է, որ 1671թ. Թիֆլիսի 14 եկեղեցիներից 8-ը հայկական էին, իսկ մեկ այլ ֆրանսիացի՝ բուսաբան

Թուրնֆորը, նշում է, որ 1701թ. Թիֆլիսն ուներ 20000 բնակիչ, որից 14000-ը լուսավորչական հայեր էին, 3000-ը՝ մուսուլման, 2000-ը՝ վրացի և 500-ը՝ կաթոլիկ հայ [3, էջ 147]:

Այս թվերն ապացուցում են, որ Վրաստանում *քաղաքաբնականության* հիմքը դրել են հայերը: Վրաց թագավորները և իշխանները մշտապես բնակվում էին տոհմական կալվածքներում և ժամանակ առ ժամանակ իրենց ազնվականների, ծառաների, ճորտերի հետ այցելում էին Թիֆլիս: Պ.Բոսելիանին նկատում է, որ Վրաստանի քաղաքները ոչ այլ ինչ էին, եթե ոչ լեռնային բերդեր, ռազմական ամրություններ, որոնց հովանու ներքո ժողովվում ու բազմանում էր բնակչությունը [1, էջ 84]: Այս նույն միտքն է կրկնում կովկասագետ Ե.Վեյդենբաումը. «Վրաստանում երբեք չեն եղել քաղաքներ՝ բառիս դասական կամ եվրոպական իմաստով, այլ գոյություն են ունեցել միայն իշխանների ամրացված բնակավայրեր, որոնց պաշտպանության ներքո երբեմն ի հայտ էին գալիս ոչ մի ներքին ինքնուրույն կազմակերպվածություն չունեցող պատահական առևտրականների գյուղակներ» [4, c. 311]: «Պատահական առևտրականների» այս գյուղակների բնակիչները հիմնականում հույներ ու հրեաներ էին, այնինչ Թիֆլիսի ու Գորիի բուն բնակչությունը կազմում էին հայերը, որոնք ունեին իրենց ներքին ինքնուրույն կազմակերպվածությունը: Վրաց թագավորների կողմից քաղաքները հայերին «տրամադրելը» խելացի ռազմավարական քաղաքականություն էր. գյուղաբնակ և հիմնականում երկրագործությամբ զբաղվող վրացիները պարզապես զուրկ էին առևտրական լայնածավալ գործարքներ իրականացնելու ունակությունից, այնինչ հայերն ունեին առևտրավարության դարավոր ավանդույթներ: Միայն արհեստները և առևտուրը կարող էին զարգացնել քաղաքները, և կայացվեց մի չգրված համաձայնություն. հայերը քաղաքների լիիրավ տերեր էին, բայց՝ վրաց թագավորների հպատակներ: Սա երկուստեք ձեռնտու էր, այս վիճակը պահպանվեց դարեր շարունակ, և սա երկու ժողովուրդների փոխներթափանցված, համատեղ կեցության զարմանալի դրսևորում էր: Մենք սա շեշտում ենք այն պատճառով, որպեսզի հետագայում մեջբերվող փաստական, վիճակագրական տվյալները հասկանալի լինեն և առիթ չդառնան ոչ հայերի ազգային սնապարծության, ոչ էլ վրացիների ազգային անլիարժեքության հոռի արտահայտումների:

Ե.Վեյդենբաումը շարունակում է. «Միայն Թիֆլիսում ու Գորիում հայ բնակչությունը կազմավորեց քաղաքային դաս, որը մշակեց կամ, ավելի շուտ, իրացրեց սեփական կազմակերպվածություն: Դրանք, այսպես կոչված, մոքալաքներն էին: Թիֆլիսում նրանց հաստատվելու ժամանակն անհայտ է: Հավանաբար, այդ դասն աստիճանաբար կազմավորվեց այն հայե-

րից, որոնք օտարության մեջ փրկություն էին որոնում թշնամական ասպատակություններից: ...Նրանք հիմնականում զբաղվում էին առևտրով, բայց կային նաև արհեստավորներ: Չնայած մոքալաքներն այդ դասի մեջ չէին մտնում» [4]: Մոքալաքն վրացերեն նշանակում է քաղաքացի: Սկզբում այդպես էին կոչվում քաղաքների բոլոր բնակիչները, սակայն հետագայում «մոքալաքե»-ն վերածվեց պատվանունի, որ թագավորները շնորհում էին Թիֆլիսի ու Գորիի այն բնակիչներին, որոնք ունեին քաղաքաբնակային հին ծագում և վճարում էին հատուկ հարկ՝ մախթա: Այդ հարկը հավասար էր 4000 ռուբլու, ինչը վիթխարի գումար էր, և հարց է ծագում՝ որտեղից այդ փողը: Առևտրից, մոքալաքների հիմնական զբաղմունքը առևտուրն էր: XVIIIդ. ամեն տարի Թիֆլիսի մոքալաքները շուրջ 2000 ուղտաբեռ մորթեղեն և այլ ապրանքներ էին արտահանում Պարսկաստան և Կարին (Էրզրում):

Վախթանգ VI թագավորի նազիրի պաշտոնը վարում էր մոքալաք Հովսեփ Փիթոյանը: 1760թ. Ռուսաստան այցելած Թեյմուրազ թագավորի շքախմբում կային երեք մոքալաքներ՝ խոշոր վաճառականներ Գևորգ Բաղդադյանը, Նազար Գևորգյանը (Եգորով) և Մելքոն Դավթյանը: Մոքալաքները հատկապես մեծ դերակատարություն ունեին Իրակլի II-ի արքունիքում (այս վրաց արքան մեր պատմագրության մեջ հայտնի է Հերակլ անվամբ): Այսպես, մոքալաք Ամիրյանը կատարում էր գանազան դիվանագիտական հանձնարարություններ, դիվաններ՝ քարտուղարներ էին Թումանյանները, թարգմանիչներ՝ Ենիկոլայանները, մելիքներ՝ Բեհրությանները, զառնշանջիներ (զրահների վրա ոսկեգիր քանդակողներ կամ դրվագագարդողներ)՝ Բեբուդյանները, արքունի ախոռապետներ՝ Ղորղանյանները և այլն: Իրակլի II-ի օրոք XVIIIդ. վերջերին Թիֆլիսում կար 556 տուն մոքալաք, որոնք բացառապես հայեր էին [5, էջ 89-93]: Միայն ուսական տիրապետության հաստատումից հետո (1801թ.) մոքալաքների դասի մեջ մտցվեց մեկ վրացական ընտանիք:

Մոքալաքները նաև ֆինանսական աջակցություն էին ցույց տալիս արքայական ընտանիքին: Այսպես, Իրակլի II-ը մոքալաք, պարոն Հակոբից պարտք էր վերցրել 300ռ., իսկ 1799թ. մի ստացականում ասվում էր. «Ես արքայազն Գեորգիս, քեզնից՝ Մելիք Շաքարից պարտք եմ վերցնում 200 ռուբլի: Երբ քոչվորները յայլաններից վերադառնան, այնժամ լիովին կհատուցեմ: Խնդրում ենք, որ այս մասին ոչ ոք չհիմանա» [6, շ. 660]:

1801թ. տեղի ունեցավ մի հիրավի պատմական իրադարձություն, որի հետևանքները Անդրկովկասի ժողովուրդներն այս կամ այն կերպ զգում են մինչ օրս՝ Ռուսաստանը նվաճեց Վրաստանը: Դա շրջադարձային երևույթ էր, որն էական ազդեցություն ունեցավ բազմաթիվ մեծ ու փոքր ժողովուրդ-

ների առաջադիմական, բարեբեր զարգացման վրա առհասարակ: Ինչպես դիպուկ նկատել է նշանավոր տնտեսագետ Դավիթ Անանունը. «Ռուսաստանի նվաճումից հետո Անդրկովկասը դարձավ բաց շուկա, «տոնավաճառ», որի գլխավոր կրպակը Թիֆլիսն էր... Պարսիկն ու օսմանցին պատերազմում էին և կողոպտում, ռուսը պատերազմում էր և առևտուր անում» [7, էջ 228]: Ահա սա՝ էր տարբերությունը: Թե Անդրկովկասն ինչպիսի փոփոխությունների ենթարկվեց, հատկապես՝ տնտեսության ասպարեզում, մեջբերենք նույն հեղինակի մի դիտարկում ևս. «Առևտրի լայն ասպարեզ չկար. յուրաքանչյուր խանություն մի ինքնամիտ մաքսային միավոր էր, ինչը խոչընդոտներ էր հարուցում առևտրի զարգացման համար: Առևտուրը մի նպատակ ուներ՝ բավարարել տեղական բնակչության համեստ պահանջները:

Ռուսների հետ դրությունը փոխվեց: Նախ, փլուզվեցին խանական միջնորմները, որոնք դժվարացնում էին ապրանքափոխանակությունը: Անդրկովկասը անմիջական հարաբերությունների մեջ մտավ ընդարձակ և համեմատաբար բարձր կուլտուրա ունեցող Ռուսաստանի հետ: Երկրորդ, Անդրկովկասում հաստատվեց մի ստվար տարր՝ ռուս պաշտոնեությունը և զորքը, որը որպես սպառող նոր պահանջներ առաջադրեց երկրամասի առևտրին: Եվ այդ տարրը նման չէր նախկին խանական պաշտոնեությանը, որովհետև վճարում էր ստացած ապրանքի համար: Ռուսները խոշոր քանակությամբ դրամ մտցրին, իսկ մշտական ռազմական գործողությունները խոշոր ծախքերի դուռ էին բացում: Բնակչությունն, այսպիսով, հնարավորություն ունեցավ փողի վերածելու իր մթերքները և արհեստի արդյունքները: Խախտվեցին երկրամասի բնատնտեսական հիմքերը, և սկիզբ առավ ապրանք արտադրող, ապրանքներով և փողով փոխհարաբերվող հասարակարգ: Ռուսական տիրապետությունն Անդրկովկասի տնտեսական կյանքի համար ունեցավ հեղաշրջող նշանակություն: Անդրկովկասը դարձավ մի մեծ շուկա, որը սպառում էր դրսից բերած ապրանքները՝ դրա դիմաց տալով փող կամ երկրամասի հում և վերամշակման ենթակա նյութերը: Եթե 1822թ. ներմուծվել էր 825 985 ռ. և արտահանվել 463 123 ռ. ապրանք (Ռուսաստան), ապա 1875թ. համապատասխանաբար՝ 8 096 141 ռ. և 13 983 499 ռուբլու» [7, էջ 190-191]:

Այսպիսով, Վրաստանի նվաճումն առաջացրեց լրջագույն, սկզբունքորեն նոր տնտեսական փոխհարաբերություններ, որոնց կրողներ դարձան վրացական քաղաքները: Իսկ եթե նկատի ունենանք, որ քաղաքային բնակչության բացարձակ մեծամասնությունը հայերն էին, ապա պարզ կդառնա, որ հենց նրանց էր վերապահված տնտեսական բարեփոխման առաջնությունը: Այն, որ վրացական քաղաքների բնակչությունը գրեթե

զուտ հայկական էր, հեշտ է ապացուցել վիճակագրական տվյալներով: Այսպես, 1803թ. Թիֆլիսում կար 2700 տուն, որոնցից միայն 18-ն էին պատկանում վրացիներին, մնացածը հայկական էին: 1821թ. մարդահամարի տվյալներով՝ Թիֆլիսում մշտապես բնակվում էր 2951 հայ (417 վրացի և ռուս. փակագծերում նշում ենք վրացիների ու ռուսների թվաքանակը), Գորիում՝ 331 հայ (121), Անանուրում՝ 123 (24), Թելավում՝ 236 (74), Սղնախում՝ 377 (12) [6, c. 661]:

Ինչո՞ւ ենք շեշտադրում կատարում հատկապես տնտեսական գործունի վրա: Որովհետև Ռուսաստանի զինուժի նվաճողական քաղաքականությունը Անդրկովկասում, նախ, անվիճելի բարերար ազդեցություն ունեցավ, իսկ հայերի ու վրացիների պարագայում՝ նաև փրկարար դրսևորում կրոնական դավանանքի իմաստով: Սակայն հենց այդ նույն գործունը 1917-1920թթ. պատճառ դարձավ հայերի ցեղասպանությանը Բաքվում (1918թ.) և արտամղմանը՝ Թիֆլիսում:

1813թ. Ռուսաստանը գրավեց Բաքվի խանությունը, 1827-ին՝ Արևելյան Հայաստանը և հետագայում ստեղծեց Կովկասի փոխարքայությունը, որի մայրաքաղաք դարձավ Թիֆլիսը: Վրաստանն ուներ ծով և անմիջական հարաբերակցության հնարավորություն Ռուսաստանի հետ: Բաքուն ուներ նավթ և ծով: Երևանի նահանգը չուներ ոչինչ, տնտեսական հետաքրքրություն չէր ներկայացնում և ռուսական կայսրության համար ծայրամասային, բուֆերային մի գոտի էր, որն ամեն պահի կարող էր վերածվել ռազմական գործողությունների թատերաբեմի: Սակայն հայությունն ուներ մի առավելություն, որից զուրկ էին Անդրկովկասի բոլոր ժողովուրդներն ու ազգերը. դա մարդկային քաղաքակրթական ռեսուրսն էր: Արևելահայությունը հայտնվեց կայսրության միասնական ու համահավասար պետական, իրավական տարածքում, *ընդհանուր պետության* կազմում և օգտագործելով տնտեսական գործունեությամբ զբաղվելու ազգեական հակումը, բազմադարյա գենը՝ սկսեց «նվաճել» Անդրկովկասը և դարձավ Թիֆլիսի՝ «տոնավաճառի գլխավոր կրպակի» տերն ու տիրակալը:

Թիֆլիսի «նվաճումը» սկսվեց պետական կապալների վարձակալումով: Բանն այն է, որ ռուսական գործին պարեն մատակարարելը, պետական հաստատությունների համար շինություններ կառուցելը, առհասարակ իշխանության կարիքները հոգալը կատարվում էր կապալային եղանակով: Սա հարստանալու հրաշալի աղբյուր էր, որովհետև կապալառուն գործ ուներ ճշտապահորեն և կանոնավոր կերպով վճարող պետական գանձարանի հետ (օրինակ, թիֆլիսցի ոմն Քալինյան վիթխարի հարստություն դիզեց՝ բանակին միս մատակարարելով): Կապալային էր անգամ պետական տուրքերի գանձումը, մասնավորապես՝ մետաքսի տուրքի գանձումը,

որը գտնվում էր հայերի ձեռքում: Այսպես, Գանձակի նախկին խանությունում մետաքսի կապալառուներ էին Շադինյանը և Ջամալյանը, Նուխվա գավառում՝ Փրիդոնյանը, Տեր-Գրիգորյանը և Իզմիրյանը, Շամախի և Շուշվա գավառների մետաքսը վաճառվում էր աճուրդով, իսկ Ղուբայի գավառում կապալառուներ էին Լազարյանը, Տեր-Ղուկասյանը, Միրզոյանը: Կապալային եղանակով տնտեսավարումը սկզբնական շրջանում ձեռնտու էր երկուստեք. նախ, ռուսական իշխանությունը պարզապես ի վիճակի չէր, ռեսուրսներ չունեին հարկ եղած չափով համապատասխան պաշտոնեություն պահելու համար, իսկ հայերը, վրացիներն ու թաթար-ադրբեջանցիները պետական ծառայության փորձառություն չունեին: Բացի այդ, կապալային տնտեսավարումը որքան անխուսափելի, այնքան էլ ժամանակավոր բնույթ ուներ, քանզի ռուսական իշխանությունը ցանկացած հարմար ժամանակ այն կարող էր վերացնել: Սակայն կապալատվությունը հանգեցրեց այնպիսի փոխհարաբերակցության, որը հետագայում վերածվելու էր ներքաղաքական, ազգամիջյան լուրջ հակամարտությունների: Բանն այն է, որ առաջնությունն անմիջապես ստանձնեց քաղաքաբնակ հայությունը, քանզի ոչ գյուղացի ազնվական վրացին, ոչ առավել ևս միջնադարյան խավարի մեջ խարխափող թաթար-ադրբեջանցին ի վիճակի չէին առևտրով զբաղվելու, այնինչ առևտուրը քաղաքակրթության դրսևորում էր: Բացի այդ, հայերն սկսեցին կապալները միմյանց փոխանցել-վաճառել, այսինքն՝ բիզնես վարել ազգային պատկանելության հատկանիշով, ինչը թելադրված էր ոչ թե ազգայնականությամբ, այլ տնտեսական անհրաժեշտությամբ: Աստիճանաբար ձևավորվեց առևտրական, կապալառուական, վաճառուական կապիտալ, որի տերերը հայերն էին: Այդ կապիտալն էր, որ փնտրելով գործադրման նոր ոլորտներ՝ ստեղծեց Անդրկովկասի արդյունաբերությունը: Կապալներից ու մետաքսից հարստացած հայ կապիտալիստների մի մասը հիմք դրեց Բաքվի նավթարդյունաբերության զարգացմանը, մյուս մասը տնտեսական բուռն գործունեություն ծավալեց Թիֆլիսում: Տնտեսական այս իրողությունն Անդրկովկասում հանգեցրեց ժողովրդագրական փոփոխությունների. Ղարաբաղի հայությունն սկսեց զանգվածաբար արտագաղթել Բաքու, իսկ Երևանի նահանգի «թիրախ» դարձավ Թիֆլիսը:

1834թ. «մեծ կրպակում» բնակվում էր 16.807 հայ և 3582 վրացի [3, էջ 147]: 1848թ. տվյալներով Թիֆլիսն ուներ 30.814 բնակիչ. ըստ կրոնական դավանանքի լուսավորչական էին 13.779-ը, ուղղափառներ՝ 786-ը (որից 415-ը՝ հայ), լյութերական՝ 371-ը, մահմեդական՝ 1317-ը: Հիմնական զբաղմունքները առևտուրը և արհեստներն էին. 1926 արհեստավորից հայ էին 1448-ը [8, c. 92]:

1845թ. ռուս կովկասագետ Յու.Գագենմեյստերը գրում էր. «... Հայերն,

անշուշտ, չափազանց կարևոր տեղ են գրավում Անդրկովկասի բնակիչների մեջ իրենց ընդունակություններով, գործունեությամբ և լուսավորության հանդեպ ձգտումով: Նրանք մշտապես համարվել են Արևելքի ամենագործունյա մշակները: Բայց շարունակական թալանը, որին ենթարկվել են նախկին տիրակալների կամայականության ժամանակ, նրանց ընտելացրել է աշխատել բացառապես սեփական կարիքների բավարարման համար: Այդ իսկ պատճառով գյուղերում նրանք գրեթե չեն տարբերվում այլ բնիկներից և ապրում են աղքատ: Բայց դրա փոխարեն քաղաքներում, որտեղ միշտ էլ շատ է եղել հալածանքներից պաշտպանությունը և հովանավորությունը, նրանց միտքը ծավալվում է, և չկա մի աշխատանք, մի արհեստ, որով չգրադվեն: Մի քանի հարյուրամյակ գտնվելով թուրքերի ու պարսիկների լծի տակ՝ նրանք կարողանում են գնահատել բարեբեր պտուղները ռուսական կառավարման, որը նրանց ազատագրեց հարստահարումից և շնորհեց բարեկեցիկ քաղաքացիության բոլոր իրավունքները: Վերին աստիճանի օժտված լինելով ձեռներեցության ոգով և առևտրի հանդեպ հակումով՝ նրանք անհիշելի ժամանակներից տիրում են ոչ միայն Վրաստանի, այլև անդրկովկասյան գրեթե բոլոր գավառների ամբողջ առևտրին: Նրանք իրենց համար առևտրական ուղիներ գցեցին դեպի Ռուսաստան, և Անդրկովկասը միայն նրանց միջոցով է իր ապրանքներն իրացնում Ռուսաստանում: Տասնամյա արտոնյալ առևտրի գոյությունը նրանցից շատերին մղեց առևտրական նպատակներով ճանապարհվել Լայպցիգ, Համբուրգ, Տրիեստ, Մարսել և չնայած եվրոպական լեզուների չիմացությանը և շատ այլ թերությունների, այդ խիզախ վաճառականներից ոմանք կարողացան իրենց համար զգալի կարողություն ստեղծել: Պարսկաստանում եվրոպական ապրանքների առևտուրը մասամբ կատարվում է թիֆլիսահայերի կողմից: Մի խոսքով, բավական է միայն նրանց մատնացույց անել առևտրի որևիցե մի նոր ճյուղ, և նրանք գործի կնետվեն, թեկուզ դա իրենց նվազ ծանոթ և նույնիսկ վտանգավոր լինի» [9, c. 138]:

Որքանո՞վ է իրավացի սույն մեջբերման հեղինակը:

1847թ. սեպտեմբերի 1-ին Թիֆլիսի քաղաքացիներ Մկրտիչ Շահ-Մուրադյանցը և Մակար Ղուլյանցը հիմնեցին «Շահ-Մուրադյանց և Ղուլյանց» առևտրական տունը, որը մատչելի գներով զանազան միջնորդական գործարքներ էր կատարում՝ մետաքսը և այլ ապրանքներ ուղարկում էր Մոսկվա կամ վաճառում Թիֆլիսում, դրամական փոխանցումներ կատարում: Վաճառական Թամամշյանին պատկանող Թատերական շենքի չորրորդ հարկի թիվ 17 կրպակում գտնվող այս առևտրական տունն առհասարակ Անդրկովկասի առաջին ֆիրման էր [10, c. 190]:

1853թ. Թիֆլիսում կար 3330 վաճառական, որոնցից հայ էին 2283-ը:

Քաղաքն ուներ ընդամենը 2 պարենային խանութ, որոնք պատկանում էին Գր. Միրաքյանին և Ս.Ելոզյանին: Ութ աղամանդավաճառներից ու ոսկեգործներից 5-ը հայ էին, 2-ը՝ հրեա, մեկը՝ վրացի [11, շ. 737]: 14 քարվանսարաններից 10-ի տերերը հայ էին [12, շ. 508]: Ընդ որում՝ արևելյան ոճով կառուցված ամենաշքեղը Սադիանի ձկնավայրի կապալառու, հետագայում՝ Թիֆլիսի քաղաքագլուխ Վարդան Արշակունուն էր: Այս քարվանսարայում 1850թ. ընդունեցին ապագա կայսր Ալեքսանդր II-ին, իսկ հետագայում այն վերածվեց մշակութային նշանավոր հավաքատեղիի՝ «Թիֆլիսյան խմբակի», ապա նաև՝ «Առևտրական ակումբի»:

Իսկ ինչ բնույթ ուներ Թիֆլիսի առևտուրը 1846-1850թթ.: «Տոնավաճառի մեծ կրպակի» առևտուրը բաժանվում էր 4 ճյուղի: *Առաջինը* առևտուրն էր Եվրոպայի հետ. ներմուծվում էին շաքար, գինի, սուրճ, ներկեր, մետաքսե, բրդե և բամբակե գործվածքներ, պերճանքի իրեր: Բուն Թիֆլիսը և Անդրկովկասը Թիֆլիսով արտահանում էր հում մետաքս, շերամի սերմ, բամբակ, բուրդ, ձկան խավիար և անմշակ կաշի: Ընդ որում, եթե ներմուծումը կազմել էր 2 մլն ռ., ապա արտահանումը՝ 2,5 մլն, որից 900 հազարը Թիֆլիսի մասնաբաժինն էր, 1.600 հազարը՝ Անդրկովկասի այլ բնակավայրերին:

Երկրորդ ճյուղը առևտուրն էր բուն Ռուսական կայսրությունում. Թիֆլիսաբնակ վաճառականներին հաճախ կարելի էր հանդիպել ամբողջ Կովկասում, Աստրախանում, Ուկրաինայում, Սանկտ Պետերբուրգում ու Մոսկվայում: Նրանք ներմուծում էին սպիրտ և օղի, թեյ, ճարպամուր, երկաթե, պղնձե, հախճապակե, կավե, ապակե, կաշվե իրեր, բամբակե, վուշե և բրդե գործվածքներ: Արտահանում էին հում մետաքս, բամբակ, գորգեր և այլն: Ներմուծումը կազմել է 3,5 մլն ռ., արտահանումը՝ 1 մլն:

Երրորդ ճյուղը առևտուրն էր ասիական երկրների, մասնավորապես՝ Թուրքիայի և Պարսկաստանի հետ: Ներմուծվում էին ծխախոտ, անասուններ, գորգ, թաղիք, մետաքսե ու բամբակե գործվածքներ, տնային հագուստ, չոր միրգ, իսկ արտահանվում էր հիմնականում ռուսական գործարանների արտադրանք: Ներմուծվել էր 2,8 մլն ռ., արտահանվել 1,3 միլիոնի ապրանք: Այսպիսով, երեք ճյուղերի գծով ապրանքաշրջանառությունը կազմում էր 11 մլն ռ., որից Թիֆլիսում առևտրով զբաղվող օտարազգիների և օտարահպատակների մասնաբաժինը 2 մլն էր, իսկ Թիֆլիսցիներինը (90%-ից ավելին՝ հայեր)՝ 9 մլն:

Չորրորդ ճյուղը ներքին, ներքաղաքային, առօրյա գործածման ապրանքների առևտուրն էր: Թիֆլիսն ուներ շուրջ 100 հազար սպառող, որոնք տարեկան ծախսում էին 3,5-5,5 մլն ռուբլի, իսկ տնատերերը տարեկան ստանում էին 300 հազ. ռ. բնակվարձ:

Այժմ նորից անդրադառնանք Թիֆլիսի բնակչության թվաքանակին

վերաբերող վիճակագրական տվյալներին, որպեսզի պարզ լինի, թե ինչպիսին էր հայերի տեսակարար կշիռն առևտրում: 1863թ. Թիֆլիսն ուներ 62.318 բնակիչ: Սրանցից 1707-ը ժառանգական ազնվականներ էին (9/10-ը՝ վրացի, 1/10-ը՝ հայ), 1997-ը՝ անձնական ազնվականներ (հայերն ու վրացիները՝ կես առ կես), որոնք առևտրով չէին զբաղվում: Առևտրով զբաղվում էին 466 պատվավոր քաղաքացիները և 3217 պաշտոնապես գրանցված վաճառականները, որոնք *բացառապես հայեր էին*: Թիֆլիսում կար 8874 քարաշեն և 72 փայտաշեն մասնավոր տուն, 14 քարվանսարա, 2863 քարաշեն կրպակ, 15 ֆաբրիկա և 119 գործարան¹: Անշարժ գույքին տիրում էր 5190 հոգի [13, c. 58-59]:

1876թ. մարտի 25-ին Թիֆլիսում անցկացվեց մարդահամար, որի արդյունքները 4 տարի անց հրապարակվեցին Կովկասյան վիճակագրական կոմիտեի պաշտոնական ժողովածուում: Ըստ այդ հավաստի և ճշգրիտ աղբյուրի՝ քաղաքն ուներ 104.024 բնակիչ, որից 12.356-ը ռուսական զորքն էր. 1864թ. համեմատությամբ բնակչության աճը վիթխարի էր՝ 55,5%: Հիմնական բնակչությունը կազմում էին հայերը, ռուսները և վրացիները՝ 87,08%. հայեր էին 37.610-ը (36,16%), ռուսներ (այդ թվում և զորքը)՝ 30.813 (29,62%), վրացիներ՝ 22.156 (21,30%): Բացի այդ, Թիֆլիսում մշտապես բնակվում էր 38 ազգերի և ազգությունների ներկայացուցիչներից բաղկացած մի խառնարան՝ 13.445 հոգի (12,92%) [13, c. 75, 93]:

Քաղաքը բաժանված էր 16 տեղամասերի, որոնք բոլորը կրում էին հայկական անվանումներ, և ժողովածուի կազմողն ու խմբագիրը՝ Կովկասյան վիճակագրական կոմիտեի գլխավոր խմբագրի օգնական Դ.Կոբյակովը, գրում է. *«Ռուսները գերազանցապես ապրում են քաղաքի նորակառույց մասերում՝ խուսափելով նեղիկ թաղամասերից ու նրբանցքներից, ուղղակի ապացույց այն բանի, որ չեն կարող համակերպվել հին քաղաքի և Հավլարարի մի մասի տեղամասերի կեղտոտ ու նեղիկ հակասանիտարական իրավիճակի հետ»*: Ապա ավելացնում է. *«Հայերը պակաս պահանջկոտ են ապրելակերպի հարմարավետության հանդեպ, այդ իսկ պատճառով ապրում են հին քաղաքում: Բացառություն է կազմում II թաղամասը (Երևանյան հրապարակը. ի դեպ, այստեղ՝ Պասկևիչի, հետագայում Մախարաձեի փողոցում գտնվում էր Ալ. Մանթաշյանցի տունը, այժմ՝ Արվեստի աշխատողների տունը՝ Խ.Դ.), որտեղ ապրում է հայոց մեծահարուստ դասը»* [13, c. 102]:

Հեղինակի այս պնդումը, մեղմ ասած, ճշմարտությանը չի համապատասխանում, և խնդիրը միանգամայն այլ է: Նախ, բավական է թուուցիկ հայացք ձգել նորակառույց թաղամասերի տնատերերի ցանկին, և կհանդի-

¹ Դրանք այսօրվա պատկերացմամբ, ըստ էության, արտադրամասեր էին:

պես բազմաթիվ հայերի: Երկրորդ, Թիֆլիսի բնիկները՝ հայերը, հենց իրենք էին կառուցել հին քաղաքը և կացութաձևով, մտածելակերպով, հուշերով կապված էին իրենց պապենական տներին: Իսկ ռուսները շատ ավելի ուշ էին եկել և, բնականաբար, պիտի բնակություն հաստատեին նորակառույց ծայրամասային թաղամասերում: Հայերն, օրինակ, Մոսկվայում բնակություն են հաստատել XIV դարից, սակայն ոչ ոքի մտքով չի անցնի պնդել, թե Հայկական նրբանցքից անդին ապրողները «պակաս պահանջկոտ են ապրելակերպի հարմարավետության հանդեպ»:

Որոշակի հետաքրքրություն է ներկայացնում նաև Թիֆլիսի բնակչության կրթվածության մակարդակը: Գրագետ էր 36,5%-ը, ընդ որում՝ ռուսներից (կլորացված թվերով)՝ 9000-ը, վրացիներից և իմերեթցիներից՝ 7000-ը, 2000 գերմանացիներից՝ 1500-ը, 1500 լեհերից՝ 1000-ը: Հայերից գրագետ էր 30,21%-ը (շուրջ 11 հազար հոգի), սակայն 22,79%-ը ազատ տիրապետում էր նաև ռուսերենին [13, c. 127]:

Ուշադրություն դարձնենք մի երևույթի ևս՝ բարոյականությանը: Ինչպես հայտնի է, որտեղ կատարվում է դրամի խոշոր մուտք, կուտակումներ, այնտեղ անխուսափելի է բարոյական անկումը: 1876թ. Թիֆլիսում պաշտոնապես կար 36 հասարակաց տուն, որտեղ պոռնկությամբ էր զբաղվում 280 կին: Նրանցից 1,49%-ը վրացուհիներ էին, 0,83%-ը՝ ռուսներ, 0,69%-ը՝ ֆրանսուհիներ, 0,65%-ը՝ պարսկուհիներ, 0,64%-ը՝ հրեուհիներ, 0,59%-ը՝ լեհուհիներ, 0,10%-ը՝ գերմանուհիներ, թաթար-ադրբեջանուհիներ՝ 2,39%-ը և հայուհիներ՝ 0,26%-ը [13, c. 217]: Հեշտ է նկատել, որ բնակչության թվաքանակի համեմատությամբ պոռնկության ցուցանիշով բացարձակ առաջատարն էին թաթար-ադրբեջանուհիները, հետնապահը՝ հայ կանայք:

Դ.Կոբյակովը այսպիսի մի միտք էլ է արտահայտում. *«Ռուսները Թիֆլիսում հիմնականում ներկայացնում են կապիտալներ չունեցող ծառայողական տարրը, վրացիները նույնպես կապիտալներ չունեն: Իսկ հայերը, որոնց սեփականությունն է Թիֆլիսի գրեթե ողջ անշարժ ունեցվածքը, ձեռներեց մարդիկ չեն. կապալառություն և առևտուր՝ ահա նրանց սիրած զբաղմունքը, դրանից այն կողմ նրանց ձեռներեցությունը չի անցնում»* [13, c. 207]: Այս պնդումն էլ է հիմնագուրկ: Որովհետև եթե, հիրավի, առևտրի ասպարեզում հայերն առաջատար էին (6203 վաճառականներից հայ էին 4237-ը, վրացի՝ 1078-ը և ռուս՝ 98-ը), ապա վերամշակող արդյունաբերությամբ զբաղվող 11 հազար անձանց գրեթե կեսը հայեր էին, 3000-ը՝ վրացի, 1000-ը՝ ռուս [14, c. 42]: Եվ այս բնագավառում բացարձակ առաջնությունը պատկանում էր *Գրիգոր Գրիգորի Աղեղխանյանին*:

Այս մարդը հիմնեց «Կովկասում Գ.Գ. Ադելխանովի կաշվի և թաղիքի արտադրության բաժնետիրական ընկերությունը»¹, որը Բաքվի նավթ-արդյունաբերական ձեռնարկություններից հետո ամենախոշոր ֆիրման էր Անդրկովկասում:

Գ.Ադելխանյանի մասին առաջին տեղեկությունը վերաբերում է 1869թ., երբ նա հիշատակվում է որպես Ռուսական կայսրության պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքի վերահսկիչի կրտսեր օգնական, երկու տարի անց դառնում է վերահսկիչ, իսկ երկու տարի հետո նշանակվում 1871թ. թիֆլիսահայերի ստեղծած «Թիֆլիսի փոխադարձ վարկի ընկերության» կառավարիչ: Ըստ վերջին՝ 1916թ. տեղեկության, Գ.Ադելխանյանը դեռևս վարում էր այդ պաշտոնը, հետևաբար նա Անդրկովկասի այդ հնագույն ֆինանսավարկային հաստատության կառավարիչ է եղել առնվազն 33 տարի: Սակայն հայոց բիզնեսի պատմության մեջ Գ.Ադելխանյանը մնաց ոչ այդ պաշտոնի շնորհիվ:

Ամեն ինչ սկսվեց այն բանից, որ 1875թ. Քոնի ափին, Վորոնցովսկայա փողոցում գտնվող սեփական շենքում նա հիմնեց կաշվի մի փոքրիկ գործարան: Այստեղ ընդամենը 30 բանվորներ զբաղվում էին ոչխարի և այծի կաշվի վերամշակմամբ, իսկ տարեկան արտադրանքը կազմում էր 60 հազար ռուբլի: Սակայն հենց սկզբից արտադրանքն այնքան բարձրորակ էր, այնպիսի լայն պահանջարկ ունեցավ, որ Ադելխանյանը մի խանութ բացեց Թիֆլիսում, իսկ մեկն էլ՝ Սանկտ Պետերբուրգում, Կարավաննայա փողոցի թիվ 28 հասցեում: Երկու տարի անց՝ 1877-ին, գործարանն սկսեց վերամշակել նաև խոշոր եղջերավոր անասունների կաշին և դարձավ Անդրկովկասում արտադրության այդ ճյուղի անվիճարկելի առաջատարը: 1879թ. Կովկասի փոխարքա և Կովկասյան բանակի գլխավոր հրամանատար Մեծն իշխան Միխայիլ Նիկոլանիչը պայմանագիր կնքեց Գ.Ադելխանյանի հետ, համաձայն որի՝ նրա գործարանը բանակին 5 տարի ոտնամաններ պիտի մատակարարեր, տարեկան 360 հազար ռուբլու չափով: Հարկ է նշել, որ այդ պայմանագիրը շարունակաբար երկարաձգվեց, և Ադելխանյանը մշտապես մնաց բանակի մատակարար՝ ընդհուպ մինչև 1917-1918թթ., երբ Կովկասյան ռազմաճակատը վերջնականապես կազմալուծվեց և ռուսական զորքերը լքեցին ոչ միայն Արևմտյան Հայաստանը, այլև Անդրկովկասը:

Գ.Ադելխանյանն առաջինն էր ամբողջ Կովկասում, որ կաշվի արտադրությունն իրականացրեց եվրոպական չափանիշներով: Նրա արտադրանքը 1882թ. Մոսկվայում կայացած Համառուսաստանյան արդյունաբերագեղար-

¹ Акционерное общество кожевенного и войлочного производств на Кавказе Г.Г. Адельханова. Краткий очерк истории возникновения, развития и современного положения фабрично-заводской деятельности общества 1875-1901гг., Тиф., 1901г.

վեստական ցուցահանդեսում արժանացավ բրոնզե մեդալի, 1889թ. Թիֆլիսի գյուղատնտեսական և արդյունաբերական իրերի կովկասյան ցուցահանդեսում՝ ոսկե մեդալի, 1890-ին՝ ֆինանսների նախարարության և Ռուսական կայսերական տեխնիկական ընկերության ոսկե մեդալին, 1896-ին՝ ոսկե և արծաթե մեդալների Նիժնի Նովգորոդի ցուցահանդեսում:

Լուրջ բիզնեսը մշտապես կարիք ունի ֆինանսական նորանոր ներդրումների, և դա էր պատճառը, որ 1896թ. ապրիլի 12-ին Գ.Ադելխանյանը Հովհաննես Ալիխանյանի և Պետրոս Ալիբեկյանի հետ ստեղծեց «Կովկասում Գ.Գ. Ադելխանովի կաշվի և թաղիքի արտադրության բաժնետիրական ընկերությունը»՝ 1,5 մլն ռ. հիմնադիր կապիտալով: Այս արդյունաբերական հսկան բաղկացած էր երեք ձեռնարկությունից՝ կաշվի գործարանից, թաղիքի շոգեֆաբրիկայից և կոշիկի ֆաբրիկայից: Գործարանն զբաղեցնում էր 1,5 հա ասֆալտապատ ու ցեմենտապատ տարածք, ուներ երկհարկանի մասնաշենքեր, վագոնետկաներ, ջրատարներ, շոգեմուղներ, իսկ կաշին գնվում էր ամբողջ Կովկասում:

1889թ. հիմնված թաղիքի եռահարկ շոգեֆաբրիկան զբաղեցնում էր 1700մ² տարածք, իսկ ընդհանուր մակերեսը 3150մ² էր, կից ուներ էլեկտրակայան՝ լուսավորության ու շարժիչները հոսանքով սնուցելու համար: 1890թ. սկսած՝ շոգեֆաբրիկան արտադրել էր տասնյակ հազարավոր յափնջիներ, 1896-ից՝ նաև բուշլատներ, իսկ բարակ թաղիքից կարված տղամարդկանց ու կանանց վերնահագուստը լայն սպառում ուներ եվրոպական Ռուսաստանում և հատկապես Սիբիրում ու Հեռավոր Արևելքում՝ որպես զինվորականների, երկաթգծի ծառայողների, ծովայինների համազգեստ:

1886թ. հիմնված կոշիկի ֆաբրիկայի շենքը եռահարկ էր և զբաղեցնում էր 660մ² տարածք: Այստեղ արտադրվում էին զինվորական երկարաճիտ ոտնամաններ (սապոգներ)՝ բանակի համար, եվրոպական և ասիական բոլոր տեսակի կոշիկներ, որոնց տակացուները ներմուծվում էին ԱՄՆ-ից: Եվրոպական Ռուսաստանում ու Սիբիրում հատկապես մեծ պահանջարկ ունեին այծենակաձևերը և թաղիքե ոտնամանները, որոնց գործարանային արտադրության հիմնադիրը կայսրությունում Գ.Ադելխանյանն էր: 1912թ. նա կոշիկի 2 խանութ ուներ Թիֆլիսում, իսկ Սանկտ Պետերբուրգի խանութը, որտեղ վաճառվում էին նաև թամբեր և ճամփորդական կաշվե իրեր, Կարավաննայա փողոցից տեղափոխվել էր Նևսկի պողոտայի թիվ 44 շենք:

1900թ. Գ.Ադելխանյանի բոլոր երեք ձեռնարկություններում աշխատում էր 1107 բանվոր, որոնց տարեկան աշխատավարձը կազմել էր 231.402ռ., իսկ համախառն արտադրանքը՝ 1.904.451ռ.:

Վերջարարողյալով ժխտվում է այն աչառու կարծիքը, թե Թիֆլիսում հայերը զբաղվում էին միայն կապալառությամբ և առևտրով: Հայերը բա-

ցարձակ առաջատարներ էին նաև տնտեսության գրեթե բոլոր ճյուղերում, և Գ.Ադելխանյանն ամենևին միակը չէր:

Դեռևս 1870թ. մետաքսարդյունաբերող և ձկնարդյունաբերող, իսկ հետո նաև Բաքվի նավթարդյունաբերության ռահվիրա *Հովհաննես Մինասի Միրզոյանն* ու նրա եղբայր Գաբրիելը հիմնեցին Թիֆլիսի բամբակե գործվածքեղենի առաջին գործարանը, որը 20 տարի անց վաճառեցին նշանավոր բանկատեր *Հովհաննես Չիթախյանին՝* քաղաքի անշարժ գույքի *ամենահառաջին սեփականատիրոջը:*

1871թ. հիմնվեցին Թիֆլիսի Առևտրային բանկը և Փոխադարձ վարկի ընկերությունը, որոնց վերաբերյալ Դ.Անանունը գրում էր. *«Դրանք դարձան հայկական կապիտալի կուտակման և տնտեսական քաղաքականություն վարելու կենտրոններ»* [15, 16]:

Առևտրային բանկի հիմնադիրներն էին վաճառականներ, ձեռնարկատերեր և կալվածատերեր Մ.Ալիխանյանը, Հովհ. Ամիրադյանը. Դ.Նադիրյանը, Մ.Թամամյանը, Ա.Ղորղանյանը, Ալ. Թայիրյանը, Խ.Տեր-Մկրտչյանը, Ս.Ղորղանյանը, Ալ. Օնիկյանը, Է.Էջուբյանը, Հովհ. Անանյանը, Ալ. Բաբանասյանը, Ս. և Հ.Իզմիրյան եղբայրները, Ն.Միրիմանյանը, Ս.Միրիմանյանը, Ն.Փրիդոնյանը, Հովհ. Ռոտինյանը, Գր. Թամամյանը, Մ. և Հովհ. Ծուրիկյան եղբայրները, Ե.Դավթյանը, Հովհ. Եվանգուլյանը, Հովհ. Մարգարյանը, Ե., Ի. և Ալ. Ծովհանյան եղբայրները, Ե.Ջաղեթյանը, Հ.Ալեյանը, բժիշկ Մ.Շահպարտյանը, որոնք իշխանությունների անհարկի կշտամբանքներից ու կասկածներից զերծ մնալու համար ընդգրկեցին իշխաններ Ն.Բեկթաբեկովին և Պ.Նակաշիձեին, բարձրաստիճան պաշտոնյաներ Ի.Զուբալովին ու Կ.Ռեյտերին և մի կարճ ժամանակով բանկի վարչության նախագահ ընտրեցին վերջինիս: Իր գործունեությունն սկսելով 500 հազար ռ. հիմնադիր կապիտալով՝ այս բանկը 1914թ. ուներ 6 մլն ռ. հիմնադիր ու 3,8 մլն ռ. պահուստային կապիտալ և կովկասյան միակ ֆինանսական հաստատությունն էր, որի բաժնետոմսերը վաճառվում էին Պետերբուրգի սակարանում:

Նույն սկզբունքով ստեղծվեց նաև Փոխադարձ վարկի ընկերությունը, վարչության խորհրդի նախագահ ընտրվեց Վ.Կայդանովը, անդամներ՝ Ալ.Մանթաշյանցը, Հովհ.Չիթախյանը, Ալ.Մատինյանը, Ս.Ճաղելին, իսկ սկզբից մինչև վերջ կառավարիչն էր Գ.Ադելխանյանը: 1915թ. վարկային այս հաստատության անդամներ էին 3102 հոգի, որից հայ՝ 1210-ը:

Ավարտելով բանկային թեման՝ ասենք, որ 1912թ. նոյեմբերի 30-ին հայերը 5 մլն ռ. հիմնադիր կապիտալով ստեղծեցին ևս մեկ՝ Թիֆլիսի Վաճառականական բանկը [17]: Հիմնադիրներն էին Թիֆլիսի քաղաքագլուխ Ալ.Խատիսյանը, Ա.Միլյանցը, Ա.Բաղդասարյանը, Մ.Բոգարջյանցը, Հ.Սեյ-

լանյանը, Մ.Դոլուխանյանը, Ա.Էնֆիաջյանը, Ս.Գյուլբենկյանը, Ե.Թյունի-բեկյանը, Գր.Համբարդանյանը, Հ.Կամոյանը, Ս.Տեր-Հովհաննիսյանը, Մ.Քալանթարյանը, Մ.Մարտիրոսյանը: Համեմատության համար նշենք, որ այս նույն թվականին վրաց վերնախավը, ի վերջո, արթնացավ թմբիքից, ստեղծեց իր առաջին՝ Թիֆլիսի Ազնվականական հողային բանկը, որի հիմնադիր կապիտալն ընդամենը 147.300 ռուբլի էր:

1880-ական թվականները թիֆլիսահայոց կապիտալի համար նոր վերելքի շրջան հանդիսացան: Թիֆլիսի Առևտրական պատգամավորության (Торговая депутация) նախագահ, 1-ին գիլդիայի վաճառական *Գևորգ (Եգոր) Մովսեսի Ղազումյանը* հիմնեց «Եգոր Կասումով և ընկ.» առևտրական տունը: Նախնական կապիտալը ընդամենը 14 հազ. ռուբլի էր, որից 10 հազարը ներդրել էր հիմնադիրը, իսկ 4 հազարը՝ նրա չորս գործընկերները: 1881թ. այդ ընկերությունն ուներ արդեն 620 ավանդատու, իսկ հիմնադիր կապիտալը 88 հազար ռուբլի էր, որից 15 հազարը Գ.Ղազումյանին էր, 73 հազարը՝ մյուսներին: Սակայն զարմանալի էր այս ֆիրմայի գործունեության արդյունավետությունը. դրամաշրջանառությունը կազմել էր 1.857.858 ռուբլի... [18, c. 212]:

Ռուս կապիտալիստ Ս.Մորոզովի առևտրային գործակալ Ա.Մակարովը, 1881թ. նոր շուկաներ ուսումնասիրելու «հետախուզական» նպատակով Անդրկովկաս այցելելով և լիակատար հիասթափություն ապրելով, ցավով արձանագրում էր. «*Թիֆլիսում ռուսական առևտրաարդյունաբերական շահերը հանձնված են հայերին*» [19, c. 155]: Նույն թվականին «Կավկասկի կալենդարը» գրում էր. «*Թիֆլիսի նահանգի բոլոր քաղաքներում հայերն իշխող տարր են. Թիֆլիսում բնակչության գրեթե կեսը (45%) հայեր են, վրացիներ՝ 26%, ռուսներ՝ 24%, թաթարներ՝ 5%: Մյուս քաղաքներում հայերն իրենց թվաքանակով ճնշում են վրացիներին. Ախալցխայում նրանք կազմում են 93%: Անգամ ի բնե վրացական հողում՝ Թելավ ու Սդնախ քաղաքներում, բնակչությունը գրեթե բացառապես հայկական է՝ 73% և 89%, այնտեղ Թելավի գավառի գյուղերում 49.103 բնակչից ընդամենը 2869-ն է հայ, այսինքն՝ 6%, Սդնախի գավառի 74.142 բնակիչներից 5.567-ն է հայ, այսինքն՝ 7,8%: Հայկական գյուղական բնակչությունը հիմնականում խմբված է Ախալքալաքի և մասամբ Ախալցխայի, Բորչալվի ու Թիֆլիսի գավառներում*» [20, c. 312]: Այս մեջբերումները վկայում են այն մասին, որ Վրաստանում հայությունը հիմնականում քաղաքաբնակ էր և գերազանցապես զբաղվում էր առևտրաարդյունաբերական գործունեությամբ: 1889թ. Թիֆլիսում պաշտոնապես գրանցված էին 1-ին և 2-րդ գիլդիայի 47 վաճառականներ, որոնցից 7-ը գերմանացի էին, 4-ը՝ ռուս, 3-ը՝ վրացի, մեկական՝ թաթար-ադրբեջանցի, լեհ, անգլիացի ու ֆրանսիացի, իսկ 29 հոգի՝ հայ: Այդ

նույն թվականին Թիֆլիսում կայացած Գյուղատնտեսական և արդյունաբերական իրերի կովկասյան ցուցահանդեսում փայլուն հաջողություններ արձանագրեցին հայերը, որոնք ոսկե մեդալների արժանացան հողագործության, գինեգործության, մետաքսագործության, մեղվաբուծության, փայտամշակման, լեռնարդյունաբերության և ֆաբրիկագործարանային արտադրության ոլորտներում [21, c. 69-71]:

Շատ հետաքրքիր է նաև Թիֆլիսցի հայ վաճառականի հավաքական հոգեբանական կերպարը, որը դիպուկ ներկայացրել է Մագդա Նեյմանը (նույնինքը՝ ազգությամբ ուսի Գրիգոր Նիկողոսյանը). *«Հայը սովորաբար ձեռնարկում է ոչ մեծ գործ և այն էլ լույս աշխարհից հետո, երբ տեսնում է ուրիշի արածը: Բայց եթե մի բան սկսեց՝ ոչ մի դեպքում հետ չի կանգնի, ինչքան էլ վնաս կրի: Առևտրական գործարքներն ընդլայնելիս նրա ծայրաստիճան զգուշավորությունը և անվճռականությունը նվազագույնի են հասցնում կորուստ կրելու հնարավորությունը, բայց դեպ իր նպատակ նա ընթանում է դանդաղ ու հետևողականորեն, որքան էլ դրա համար երկարամյա համբերատարություն պահանջվի: Հայերի այսպիսի որակների առկայության պարագայում առևտրով զբաղվող նրանց մեծ մասը կրպակների ու խանութների սեփականատեր է: Այդ ճանապարհով որոշակի կարողություն ձեռք բերելով՝ հայը նոր գործ չի ձեռնարկի, չնայած պարզորոշ կգիտակցի սպասվելիք շահույթը:*

...Կոլեկտիվ գործունեությունը՝ կոոպերատիվ ձեռնարկությունների և առևտրական ընկերությունների տեսքով, հայերի մոտ երբեք զարգացած չի եղել: Եվ դա հիմնականում արդյունք է այն բանի, որ նրանց մոտ չկան կազմակերպչական ընդունակություններ, հոգեբանորեն տարանջատված են և յուրաքանչյուրը ձգտում է ինքնուրույնաբար տնօրինել ամբողջ ձեռնարկությունը... Նա գործ է բռնում այնպիսի հայերի հետ, ինչպիսին ինքն է, հետևաբար, նրա կարծիքով, ինքը նրանցից ոչ մի բանով պակաս չէ» [22, c. 192-194]:

Մ.Նեյմանը մեծավ մասամբ իրավացի էր: Այն, որ հայերը ձգտում էին կոլեկտիվ գործունեությամբ չզբաղվել, ուներ իր պատճառաբանված բացատրությունը. *դարեր շարունակ գտնվելով օտարի լծի տակ կամ օտարության մեջ, զրկված լինելով կյանքի, գույքի, ունեցվածքի տարրական ապահովությունից՝ հայն իր գոյության միակ երաշխիքը տեսնում էր տնտեսական, վաճառականական գործունեության մեջ, այդ իսկ պատճառով ցուցաբերում էր վերին աստիճանի զգուշավորություն ու հաշվենկատություն:* Եր հացը վաստակելու բնական պահանջմունքը նրան ստիպում էր բիզնես վարել եղբայրների, մերձավոր ազգականների կամ ազգակիցների հետ, սակայն ժամանակի ընթացքը, ընդհանուր պետության իրավական ոլոր-

տում բիզնեսի բնականոն զարգացումը նրան դրդում էր ընդլայնել գործունեության շրջանակները՝ շեշտը, այդուամենայնիվ, դնելով ազգային պատկանելության հատկանիշի վրա: Եվ դա արդյունքի էր հասցնում:

Այսպես, 1900թ. Թիֆլիսի 71 արդյունաբերական ձեռնարկություններից հայկական էին 36-ը (2 մլն 580 հազար ռուբլի շրջանառությամբ), վրացական՝ 7-ը (103 հազ. ռ.), գերմանական՝ 17-ը (481 հազ. ռ.): Բաժնետիրական արդյունաբերական ընկերությունները 8-ն էին, որոնցից ընդամենը երկուսն էին հայկական, սակայն եթե դրանց շրջանառությունը կազմում էր 1 մլն 758 հազ. ռ., ապա մյուս վեց ընկերություններինը միասին վերցրած՝ 1 մլն 738 հազար:

Հարկահավաք մարմինների տվյալներով՝ Թիֆլիսի առևտրում և արդյունաբերությունում հայերին էր պատկանում բոլոր ձեռնարկությունների 62%-ը, շրջանառությունների 73%-ն ու եկամտի 69%-ը [23, էջ 56-57]: Կային արտադրական ճյուղեր, որոնք մենատիրաբար պատկանում էին հայերին, և այդպիսիներից էր ծխախոտարդյունաբերությունը:

Դեռևս 1855թ. *Համբարձում Էնֆիաջյանցը* Թիֆլիսում ուներ գլանակի երկու կրպակ, մեկը՝ Երևանյան հրապարակում, Թամամշյանի տան առաջին հարկում, մյուսը՝ Վելյամինովսկայա փողոցում, Խոջամինասյանի տանը: Սրանք քաղաքում ծխախոտի առաջին քաղաքակիրթ վաճառատեղիներն էին: Հ.Էնֆիաջյանցն *առաջինն* էր, որ զբաղվեց ծխախոտի արդյունաբերական արտադրությամբ: Նա Թիֆլիսի նահանգի Մոնասի գավառի Լագոդեխ բնակավայրի մոտ ուներ ընդարձակ պլանտացիաներ, որտեղ աշխատում էին բազմաթիվ փորձառու համշենահայ ծխախոտագործներ: 1895թ. Հ.Էնֆիաջյանցը հիմնեց «Միր» ֆաբրիկան, որը 1901-ին վաճառեց ազգակիցներին, իսկ ինքը հիմնեց նորը: Նա մեծ հեղինակություն ու հարգանք էր վայելում Թիֆլիսում. 2-րդ գիլդիայի վաճառականը քաղաքային Հասարակական կառավարչության անդամ էր և դումայի պատգամավոր (1864թ.), 1895-ից՝ Փոխադարձ վարկի ընկերության անդամ:

Հոր բիզնեսը հաջողությամբ շարունակեց ու որակական նոր աստիճանի հասցրեց որդիներից Արտաշեսը: 1912-ից 1-ին գիլդիայի այդ վաճառականի «Ա.Հ. Էնֆիաջյանց» ֆաբրիկայում աշխատում էր 280 բանվոր (քանակով ամենամեծաթիվը), և արտադրվում էր տարեկան 1 մլն ռուբլու ծխախոտ: Ֆաբրիկան թողարկում էր «Մուլիդնիյե», «Բնտելիզենտնիյե», «Էքստրա» անվանումներով ընտիր գլանակներ:

Ա.Էնֆիաջյանցը խորապես ազգասեր մարդ էր: Լինելով քաղաքային դումայի պատգամավոր, Փոխադարձ վարկի ընկերության անդամ, Վաճառականական ասոյանի ավագի տեղակալ, Մակարանային կոմիտի անդամ՝ նա միաժամանակ Ալ. Մանթաշյանցի առևտրական դպրոցի և 1-ին առևտ-

րական ուսումնարանի հոգաբարձական խորհուրդների անդամ էր, տեխնիկական ու երկաթուղային ուսումնարանի չունևոր աշակերտների օժանդակության ընկերության նախագահ, Խոնիի (Քութայիսի նահանգ) արհեստագործական դպրոցի պատվավոր տեսուչ: Իսկ 1909թ. հանգուցյալ հոր 300 կտոր հայերեն գրքերը նվիրաբերեց «Կովկասի հայոց բարեգործական ընկերությանը»:

1918-1920թթ. քաղաքական խառնիխուռն, հեղափոխական իրադարձությունների պատճառով Հ.Էնֆիաջյանցը ստիպված եղավ արտագաղթել Բելգիա, Բրյուսելում հիմնեց «Էնֆի» անվամբ ծխախոտի ֆաբրիկան, ուր հիմնականում աշխատում էին բազմաթիվ գաղթական կովկասահայեր: Ավելորդ չէ նշել, որ 1925թ., «Էնֆիից» բացի Բելգիայի մայրաքաղաքում հայերին էին պատկանում ևս չորս ծխախոտարդյունաբերական ձեռնարկություններ՝ Ա. և Հ.Գոյունձյան եղբայրների «Էլմաս», Դ.Մսրյանի «Տավրոս», Տ.Մուրադյանի «Կարս», Ա.Մաթոսյանի «Մարուֆ» ֆաբրիկաները:

Համբարձում Էնֆիաջյանցի «Միր» ֆաբրիկայի հիման վրա 1901թ. Թիֆլիսում ստեղծվեց նույնանուն բաժնետիրական ընկերությունը, որի վարչության նախագահն էր Բ.Եղիազարյանը, անդամներ՝ Գ.Տեր-Ասատրյանը և Ս.Անտոնյանը (մեկ տարի անց վարչության անդամներ դարձան Գ.Բայանդուրյանը, Ռ.Գոքիեյանը): 500 հազար ռուբլի հիմնադիր կապիտալով այդ ֆիրման արտադրում էր «Ատլաս» մակնիշի ծխախոտ ու գլանակներ, որոնք վաճառվում էին Թիֆլիսի ու Բաքվի սեփական խանութներում: Ընդամենը 79 բանվոր ունեցող այս ֆաբրիկան տարեկան թողարկում էր 750 հազար ռուբլու ծխախոտ:

Միքայել Սաֆարյանը դեռևս 1873թ. հիմնել էր Թիֆլիսի ծխախոտի հնագույն ֆաբրիկաներից մեկը: Նրա բարձրորակ արտադրանքը միայն եվրոպական ցուցահանդեսներում արժանացել էր 14 պարգևների, ինչպես նաև 17 մեդալների ու պատվոգրերի՝ տարբեր ցուցահանդեսներում: Նրա մահվանից հետո, 1898-ից, բիզնեսը շարունակեց դուստրը՝ Նատայան: Սակայն կնոջ համար, բնականաբար, դժվար էր ծխախոտարդյունաբերությամբ զբաղվել, այդ իսկ պատճառով նա ֆաբրիկան վաճառեց Ղ.Անդինյանին և Հ.Մամեդովին: Նոր սեփականատերերը պահպանեցին ֆիրմայի անվանումը (դա բիզնեսի հաջողության լավագույն երաշխիքներից մեկն էր), և 1914թ. «Մ.Պ. Սաֆարյանի ժառանգներ» ֆիրման արտադրեց 200 հազար ռուբլու ծխախոտ:

1910-ից Թիֆլիսում հանրահայտ դարձավ ևս մեկ ծխախոտարդյունաբերական ձեռնարկություն՝ «Սեյլանյան եղբայրներ» առևտրական տան ֆաբրիկան: Տարեկան արտադրանքը կազմում էր 500 հազար ռուբլի: Ձեռնարկությունը թողարկում էր «Պրիմա», «Զեֆիր», «Դելիկատնիյե» անվա-

նումներով գլանակներ և «Իմպերատորսկի», «Տուրեցկոյե սերդցե», «Պրիդ-վորնի», «Դյուբեկ տուրեցկի», «Մակեդոնսկի» անվանումներով ծխախոտ:

«Կոմետա» ֆաբրիկան տարեկան թողարկում էր 300 հազար ռուբլու ծխախոտ: Ֆաբրիկայի արտադրանքը Հռոմի ցուցահանդեսում արժանացավ «Գրան պրի» մրցանակի և ոսկե մեդալի:

Սակայն թե՛ Թիֆլիսի, թե՛ առհասարակ Կովկասի ծխախոտարդյունաբերության անառարկելի առաջատարը *Նիկողոս Հովհաննեսի Բոզարջյանցն* էր: Նա իր ֆաբրիկան հիմնել էր դեռևս 1858թ., Թիֆլիսի Վերա թաղամասում գտնվող սեփական տանը: Լինելով արևմտահայ, թուրքահպատակ՝ Ն.Բոզարջյանցը սեփական պլանտացիաներ ունենալու իրավունքից զուրկ էր և օգտագործելով ազգակցական, հայրենակցական կապերը՝ Թուրքիայից էր բերում բարձրորակ հումքը: 1889թ. Գյուլատնտեսական և արդյունաբերական իրերի կովկասյան ցուցահանդեսում նա պարգևատրվեց ոսկե մեդալով՝ ընտիր մանրացված ծխախոտի և գլանակների համար:

Հոր բիզնեսը հաջողությամբ շարունակեցին որդիները՝ Հովհաննեսը և Արշակը. նրանք հիմնեցին «Ն.Հ. Բոզարջյանց և որդիներ» ֆիրման, որը բոլոր տնտեսական ցուցանիշներով դարձավ բացահայտ առաջատար: Միայն 1914թ. ֆաբրիկան թողարկեց 1 մլն 300 հազ. ռուբլու արտադրանք: Դրանք ընտիր տեսակների ծխախոտ ու գլանակներ էին, որոնցից հատկապես թանկարժեք ու հարգի էին «Սագանգեբայ» և «Պոխոդ» գլանակները: Ձեռնարկության համբավի մասին էր խոսում նաև այն փաստը, որ ֆիրման նորին կայսերական մեծություն Մեծն իշխան Նիկոլայ Միխայլովիչի պաշտոնական մատակարարն էր:

Միջանկյալ ամփոփում կատարելով՝ անդրադառնանք 1912թ. տվյալներին: Այդ թվականին Թիֆլիսում կար 35 բաժնետիրական ընկերություն, որից 16-ը հայկական էին (այդ թվում էլեկտրական ճապանուղին, որը 1900թ. կառուցել էին բելգիացիները և որի սեփականատերն էր Ֆերդինանդ Թախտաջյանը): Հայապատկան ընկերությունների ընդհանուր հիմնադիր կապիտալը կազմում էր 23.501.918 ռուբլի: Մյուս ազգություններին պատկանող 19-ը ռուսական, անգլիական, ֆրանսիական խոշոր ընկերությունների բաժանմունքներ էին, որոնց հավաքական հիմնադիր կապիտալն էապես զիջում էր հայկականին:

72 արդյունաբերական ձեռնարկություններից հայապատկան էին 38-ը: Այդ թվում օդու 5 գործարաններից՝ 4-ը (*փակագծերում նշում ենք առավել ակնառուները*. Մեսյան եղբայրներ, «Արգո»), ադյուսի 11 գործարաններից՝ 7-ը (Ռ.Մարտիրոսյան, Մ.Յուլյան), կաշվի ու թաղիքի 2 գործարանները (Գ.Ադելխանյան, Ա.Զարգարյանց ու Փ.Վարդազարյանց), կոնֆետի բոլոր 3 ֆաբրիկաները (Գ.Գյոզալյան, Գ.Ատովմյան), փայտամշակման 10 գործա-

րաններից՝ 8-ը (Ա.Զադեթյան, Ս.Գասպարյանց, Ս.Տեր-Ասատրյան, Ա.Տեր-Խաչատրյան և Գ.Ցիտկոբեկով), մանրահղկված տախտակի 3 ֆաբրիկաները (Ե.Եղիազարյան), 12 էլեկտրակայաններից՝ 7-ը (այդ թվում՝ ալեքսանդրապոլցիներ Պոդոս և Խաչատուր Չիթոդյաններին), Վ.Մամուլյանի հանքային ջրերի, Թայիրյանի, Ալիխանյանի ու Տոլեի ձիթհան, Գ.Յարալյանի չուգունի, Ալ. Մելիք-Ազարյանի պղնձահալ գործարանները:

Հայերի տնտեսական գերազանցությունն էլ ավելի ակնհայտ և անվիճելի էր առևտրի ասպարեզում: Այսպես, ասիական ապրանքների 17 խանութից հայապատկան էր 10-ը, 40 դեղատնից՝ 19-ը, 110 պարենային խանութից՝ 60-ը, 15 պարենայինից՝ 10-ը, զինու 12 պահեստից՝ 4-ը, զինու 19 խանութից՝ 17-ը, զինու 206 նկուղից՝ 109-ը, սպիտակեղենի 9 խանութից՝ 6-ը, կանանց շրջագգեստի 9 խանութից՝ 3-ը, 109 դուքանից՝ 73-ը, երկաթեղենի 38 խանութից՝ 30-ը, ոսկու և արծաթի 28 խանութից՝ 15-ը, խաղալիքների 11 խանութից՝ 7-ը, 21 գրախանութից՝ 13-ը, գորգի, մետաքսի ու բրդի 25 խանութից՝ 12-ը, կաշվի 78 խանութից՝ 53-ը, անտառափայտի 11 խանութից՝ 8-ը, մանուֆակտուրայի 142 խանութից՝ 90-ը, կահույքի 20 խանութից՝ 18-ը, կոշիկի 40 խանութից՝ 34-ը, 28 իջևանատներից՝ 11-ը, 12 ռեստորաններից՝ 6-ը:

Ի վերջո, 1912թ. Թիֆլիսի 1-ին գիլդիայի 15 վաճառականներից հայ էին 7-ը, 2-րդ գիլդիայի 68 վաճառականներից՝ 42-ը¹:

Այժմ հարկ է անդրադառնալ այն խնդրին, թե թվային ու տնտեսական գերակշռությունն ինչ ազդեցություն ուներ Թիֆլիսի քաղաքային կառավարման բնագավառում:

1890թ. հայերը կազմում էին քաղաքի բնակչության 54,8%-ը: 1893թ. Թիֆլիսի բնակչությունը 145.731 էր, որից հայ՝ 55.553, վրացի՝ 38.357, ռուս՝ 36.113, պարսիկ՝ 4615, լեհ՝ 4300, թաթար-ադրբեջանցի՝ 2505, հրեա՝ 1543, գերմանացի՝ 1661: 1895թ. հայերը 64.720 էին, վրացիները՝ 34.452, ռուսները՝ 26.922, թաթար-ադրբեջանցիները՝ 3515-ը: 1901թ. հայերի թիվն էր 63.241, վրացիներինը՝ 50.908, ռուսներինը՝ 41.934: 1912թ. Թիֆլիսում կար 81.452 հայ, 22.763 վրացի, 1914-ին՝ 129.589 հայ (37,7%), 78.356 ռուս (22,8%), 69.563 վրացի (20,2%) [24, с. 111]: Ի վերջո, բերենք նաև հավաստի վերջին՝ 1916թ. տվյալները. հայ էին 149.294 հոգի, ռուս՝ 91.997, վրացի՝ 37.584: Այսինքն՝ ակնհայտ է, որ XIX դ. վերջերին կամ XX դ. սկզբներին հայերը մեծամասնություն էին:

Նույնպիսի գերակշռություն էր տիրում նաև Թիֆլիսի ինքնակառավարման հիմնական մարմնում՝ քաղաքային դումայում: Այսպես, 1875-

¹ 1912թ. վերաբերող հաշվարկները կատարել ենք Справочная книга по гор. Тифлису, Тиф., 1912г. աղբյուրում զետեղված հարյուրավոր տվյալների զննման հիման վրա:

1886թթ. (քաղաքագլուխներ՝ Դ.Ղիփիանի, Ա.Ղորդանյան, Ալ. Մատինյան) դումայի պատգամավորների 77,4%-ը հայեր էին, 14,3%-ը՝ վրացիներ, 8,3%-ը՝ ռուսներ: 1886-1897թթ. (քաղաքագլուխ՝ Ալ. Մատինյան) հայեր էին 68,6%-ը, ռուսներ՝ 16,7%-ը, վրացիներ՝ 14,7%-ը [24, с. 178]: 1897-1910թթ. (քաղաքագլուխներ՝ Գ.Եվանգուլյան, Ք.Վերմիշյան, Վ.Չերքեզով) պատգամավորների 63,8%-ը հայ էր, 21,7%-ը՝ ռուս, 14,5%-ը՝ վրացի: 1910թ. քաղաքագլուխ ընտրվեց Ալ.Խատիսյանը, որը պաշտոնավարեց ավելի քան 7 տարի: 1910թ. դումայի անդամներ էին 36 հայ, 26 ռուս, 2 ռուսահայատակ գերմանացի և 8 վրացի, 1914թ.՝ 47 հայ, 18 ռուս, 10 վրացի, 1916թ.՝ 53 հայ, 13 ռուս, 9 վրացի: Եթե նկատի ունենանք, որ դումայի պատգամավորների ճնշող, բացարձակ մեծամասնությունը կազմում էին վաճառականները, ձեռնարկատերերը, ապա ակնհայտ կդառնա, որ տնտեսական ասպարեզում ձեռքբերումներն ուղղակի ճանապարհ էին հարթում դեպի իշխանություն:

Իսկ որ տնտեսությունը մեծավ մասամբ գտնվում էր հայերի ձեռքում՝ ապացուցում են վերջին վիճակագրական տվյալները: Եվ այսպես, 1916թ. *Թիֆլիսում հայերին էր պատկանում* 42 դեղատնից 21-ը, 146 բակալեային խանութից՝ 84-ը, 7 թղթավաճառ խանութից՝ 4-ը, 119 գինեվաճառ խանութից՝ 63-ը, կաշվե իրերի 132 խանութից՝ 116-ը, պարենային ու երշիկեղենի 29 խանութից՝ 24-ը, 37 փայտավաճառական խանութից՝ 21-ը, երկաթեղենի 36 խանութից՝ 33-ը, նավթի և նավթամթերքների 18 խանութից՝ 17-ը, հրուշակեղենի 80 խանութից՝ 45-ը, 22 գրավաճառներից հայ էին 15-ը, 20 գորգավաճառներից՝ 9-ը, 67 կաշեվաճառներից՝ 61-ը, 9 սրճարաններից հայերին էր պատկանում 6-ը, 117 ալրավաճառ խանութներից՝ 98-ը, մանուֆակտուրայի ու մահուդի 133 խանութից՝ 101-ը, կահույքի 22 խանութից՝ 19-ը, բակալեային 724 մանրավաճառ խանութից՝ 465-ը, հանքային ջրերի 11 խանութից՝ 6-ը, պատրաստի հագուստի 32 խանութից՝ 28-ը, ծխախոտի 11 խանութից՝ 9-ը, ժամացույցների, ոսկե և արծաթե իրերի 45 խանութից՝ 19-ը, ոգելից խմիչքների 6 գործարանից՝ 5-ը, աղյուսի 3 գործարանից՝ 2-ը, փայտամշակման 15 գործարանից՝ 10-ը, կոնֆետի 6 ֆաբրիկաներից՝ 3-ը, 3 ձիթհան գործարաններից՝ 2-ը, 17 էլեկտրակայաններից՝ 8-ը: Բացի այդ՝ 2 սրճավաճառ խանութները, կոշիկի բոլոր 34 խանութները, օճառի 2 գործարանները, ծխախոտի 6 ֆաբրիկաները, կաշվի ու թաղիքի 2 գործարանները, հղկած տախտակի 2 գործարանները, մակարոնի միակ ֆաբրիկան («Պետրոսյան և ընկ.»)¹:

Հայերը հիմնել և մշտապես իրենց ձեռքում էին պահել Թիֆլիսի գրեթե ամբողջ բանկային բիզնեսը (Հովհ. Չիթախյան և նրա ժառանգներ, Օովիա-

¹ Հաշվարկները կատարել ենք Кавказский календарь на 1917 год, Тиф., 1916г. աղբյուրի 1-47 էջերում գետեղված հազարավոր ազգանունների զննման հիման վրա:

նյան եղբայրներ, «Փրիդոնյան և ընկ.»), քաղաքային գրավատունը, Առևտրական պատգամավորությունը, Վաճառականական ատյանը, Սակարանային կոմիտեն:

Տնտեսական հաջողությունները հանգեցնում էին նաև այն բանին, որ հայերը ոչ այնքան բիզնեսի, որքան սեփական հաճույքի համար ներգրավվում էին եվրոպացիների ներմուծած տարաշխարհիկ զբաղմունքների մեջ: Օրինակ, 1907թ. Թիֆլիսի ֆուտբոլ խաղացողների սիրահարների «Կոմետա» խմբակի վերստուգիչ հանձնաժողովի անդամ էր Ն.Լալայանցը, սիրող-հեծանվորդների Թիֆլիսի ընկերության փոխղեկավարը (вице-командор) Ա.Սաֆարյանն էր, Թիֆլիսի «Թենիս-ակումբի» անդամներն էին Վ. ու Ե.Ծովիանյանները [14, ռ. 355, 361]: Ուշագրավ է, որ ոչ ռուսները, ոչ Անդրկովկասի մյուս ժողովուրդների ներկայացուցիչները որևէ մասնակցություն չունեին:

Ամփոփելով նշենք, որ 1917թ. ամբողջ Ռուսական կայսրությունում հաշվվում էին 1.173.096 հայեր և 823.968 վրացիներ: Ընդ որում՝ Վրաստանից դուրս գտնվում էին 2248 վրացիներ, իսկ սփռված հայերի թիվը կազմում էր 55.002 հոգի [25, ռ. 16-17]: Քաղաքական գործիչ և ժողովրդագիր Բ.Իշխանյանը գրում էր. «Կովկասի այլ ազգությունների համեմատ հայությունը, քաղաքային բնույթի զբաղմունքներում զորեղ մասնակցության շնորհիվ, առաջին տեղն է գրավում արդյունաբերությունում և առևտրում» [25, ռ. 68]: Իրոք, եթե գյուղատնտեսությամբ զբաղվում էր հայերի 11,41%-ը, վրացիների 79,1%-ը և թաթար-ադրբեջանցիների 81,66%-ը, ապա արդյունաբերությունում հայերը կազմում էին 19,28%, վրացիները՝ 5,56%, թաթար-ադրբեջանցիները՝ 4,7%, իսկ առևտրում հայերը 22,7% էին, վրացիները՝ 4,84%, թաթար-ադրբեջանցիները՝ 5,6%:

Նույն հեղինակը շարունակում էր. «Եթե հայերը կայսրության այլ ազգությունների համեմատ արդյունաբերությունում գրավում են հինգերորդ տեղը, իսկ առևտրում՝ երկրորդ, ապա Կովկասում նրանք զբաղեցնում են առաջին և իշխող դիրք» [25, ռ. 100]: Կովկասում ըստ դասային պատկանելության պաշտոնապես գրանցված վաճառականների թվային կազմն ուներ այսպիսի տեսք. հայեր՝ 6001 հոգի, ռուսներ՝ 5119, վրացիներ՝ 2283 և թաթար-ադրբեջանցիներ՝ 1386:

Այսքանից հետո լիակատար հիմնավորվածությամբ կարող ենք եզրակացնել, որ *Թիֆլիսում թվային գերակշռությունը պատկանում էր հայերին, որոնց ձեռքում էր քաղաքի կառավարումն ու տնտեսության մեծագույն մասը*: Այսինքն՝ Թիֆլիսը «հայկական քաղաք» էր:

Թե՛ թիֆլիսահայության, թե՛ առհասարակ հայոց կապիտալի և բարերարության պատմությունն անհնար է պատկերացնել առանց *Ալեքսանդր*

Հովհաննեսի Մանթաշյանցի (1842-1911թթ.): Մի մարդու, որը ռուսական (իմա՝ Բաքվի) նավթարդյունաբերության «հայկական» մասնաբաժնի առաջնորդն էր, կայսրության ականավոր բանկատերերից մեկը և իր ժամանակի ամենանվիրյալ ազգային բարերարը:

Մանթաշյանց-երևույթն ըմբռնելու համար անչափ կարևոր է գիտակցել մի իրողություն. հենց մանկուց նա առնչվեց երկու գործոնների՝ լուսավորչական հավատքի և առևտրի հետ, որոնք և ձևավորեցին նրա աշխարհայացքային պատկերացումների արժեքային համակարգը: Նրա երակներում հոսում էր քահանա և վաճառական նախնիների արյունը, մի զարմանալի մեկտեղում, որը մեր ժողովրդի համար դարձավ լիառատ արգասաբերության աղբյուր: Ալ.Մանթաշյանցի նավթը վաճառվում էր ամբողջ աշխարհում, նրա նավթատար նավերն ու պահեստարանները սփռված էին Շանհայից մինչև Կահիրե, և պատահական չէ, որ ամենուր կարելի էր հանդիպել նրա առևտրանշանին՝ խաչն ուսած Աստծո Գառանը՝ իր ժողովրդին ու հավատքին զոհաբերվելու խորհրդանիշին:

16-ամյա Ալեքսանդրը շուրջ հինգ տարի հայերեն, վրացերեն, ռուսերեն, այլ առարկաներ սովորեց Գալուստ քահանա Փափազյանի մոտ, և սա Ալ. Մանթաշյանցի միակ ուսումնառությունն էր:

1865-ին մանուֆակտուրայի վաճառական, մոքալաք Հովհ.Մանթաշյանցն ընտրվում է քաղաքային դումայի պատգամավոր: Ի դեպ, դուման զուտ հայկական էր՝ քաղաքագլխի պաշտոնակատարն էր Ս.Աբխտղոմյանը, անդամներ՝ Ն.Միլյանցը, Հ.Տեր-Ղազարյանը, Կ. Մամիկոնյանը, Ս.Արքահամյանը, Մ.Տեր-Մելքիսեթյանը [26, c. 18]:

Մեկ տարի անց Հովհ. Մանթաշյանցը կրթություն ստացած որդու հետ առևտրական գործերով մեկնում է Թավրիզ, ապա Ալեքսանդրին ուղարկում Մանչեստր, ու դա ևս մի բարեբախտություն էր: Այստեղ բնակություն հաստատելով և հորը մանուֆակտուրա առաքելով՝ նա միաժամանակ հայտնվեց եվրոպական նիստուկացի, մշակույթի, բիզնեսի ոլորտում, առաջին անգամ շփվեց սփյուռքահայ համայնքի հետ, հաղորդակից դարձավ ազգապահպանությանը և ազգակիցներից սովորեց... բարերարություն, բարի գործի կատարում:

1866թ. Ալ. Մանթաշյանցը մասնակցեց Մանչեստրի համայնքի ներքին կանոնադրքի ստեղծման աշխատանքներին: 1869-ին հայոց մատուռի կառուցման համար հանգանակության նվիրատուների թվում էր նաև Մանթաշյանցը, որը թիֆլիսցի Հովսեփյանի հետ տրամադրեց 40 ֆունտ, և դա ապագա մեծագույն ազգային բարերարի *առաջին նվիրատվությունն* էր:

Մեկ տարի անց՝ 1870-ին, երբ Մանչեստրում կառուցվեց Սբ.Երրորդություն հայոց եկեղեցին, նվիրատուների մեջ դարձյալ Մանթաշյանցն էր,

որը տրամադրեց 5 ֆունտ:

1872թ. հայր ու որդի Մանթաշյանցները վերջնականապես վերադարձան Թիֆլիս, Երևանյան հրապարակում՝ «Կավկազ» հյուրանոցի առաջին հարկում բացեցին կտորեղենի մեծածախ խանութ, հետո՝ երկրորդը, իսկ մեկ տարի անց Ալեքսանդրը դարձավ Փոխադարձ վարկի ընկերության անդամ (մինչև 1885թ.):

Թիֆլիսում մանուֆակտուրայի վաճառականներ շատ կային, առհասարակ մեծահարուստ, հաջողակ վաճառականները շատ էին, սակայն բիզնեսավարման եվրոպական մեթոդների կիրառումը, բնածիր աչքաբացությունը, առասպելական աշխատասիրությունը Ալ. Մանթաշյանցին հնարավորություն տվեցին առաջնակարգ դիրք գրավել: Այս իմաստով նրա համար շրջադարձային եղավ 1881 թվականը. այդ տարվանից նա դարձավ 1-ին գիլդիայի վաճառական և ընտրվեց քաղաքային դումայի պատգամավոր (մինչև 1892թ.): Այդ տարվանից նա ստանձնեց Թիֆլիսի ռեալական ուսումնարանի պատվավոր հոգաբարձուի պաշտոնը, որը վարեց մինչև 1894թ.:

«Մանուֆակտուրային փողերը» Ալ. Մանթաշյանցի առջև ճանապարհ հարթեցին դեպի Թիֆլիսի վերնախավ, սակայն այդ նույն փողերը պահանջում էին ներդրման նոր ոլորտներ, և նա ոտք դրեց ֆինանսական ասպարեզ՝ 1882-1888թթ. եղավ Ռուսաստանի պետական բանկի Թիֆլիսի բաժանմունքի հաշվառու կոմիտեի անդամ: Սակայն նրա ձգտումը, «թիրախը» Առևտրային բանկն էր. 1882-1884թթ. նա ընտրվեց այդ դրամատան վարչության անդամ, 1885-1889թթ.՝ վարչության փոխնախագահ, իսկ 1890-ից մինչև կյանքի վերջ՝ նախագահ, բնականաբար, հանդիսանալով նաև ամենախոշոր բաժնետերեր: Ալ. Մանթաշյանցի շնորհիվ էր, որ այդ բանկը վերածվեց Ռուսաստանի լավագույն ֆինանսական հաստատություններից մեկի, դարձավ կայսրության բորսայական արժեք և միակ բանկն էր Կովկասից, որի բաժնեթղթերը վաճառվում էին Պետերբուրգի սակարանում:

Դառնալով խոշոր ֆինանսիստ, բանկատեր՝ Ալ. Մանթաշյանցը, սակայն, չէր հրաժարվում մանուֆակտուրայի առևտրից, և դա նրա հիմնական բիզնեսն էր:

1889թ. Մանթաշյանցի կյանքում տեղի ունեցավ նոր շրջադարձ: Դեռևս 1884թ. նրա թավրիզյան օրերի ընկեր Միքայել Արամյանցը Թիֆլիսից տեղափոխվել էր Բաքու, և իր հայրենակից դարաբաղցիներ Ա.Ծատուրյանի, Գ.Թումայանի ու Գ.Առափելյանի հետ հիմնել էին «Ա.Ծատուրով և այլք» առևտրային և նավթարդյունաբերական ընկերությունը: Ֆիրման էական դեր էր խաղում Բաքվի նավթարդյունաբերությունում, գործերը հաջող էին ընթանում, բայց ֆինանսական ներդրումներ էին անհրաժեշտ: 1899թ. Արամյանցը գալիս է Թիֆլիս և Մանթաշյանցից, այսինքն՝ Առևտրային բանկից,

50 հազար ռուբլի վարկ խնդրում՝ նավթատար վագոններ ձեռք բերելու համար: Մանթաշյանցն առաջարկում է իր անձնական միջոցները, բայց պայմանով, որ ինքն էլ դառնա փայատեր: Առաջարկն ընդունվում է, և Մանթաշյանցն այդպես մուտք է գործում նավթարդյունաբերություն: Տասը տարվա ընթացքում Մանթաշյանցը գնում է Ա.Ծատուրյանի, Գ.Թումայանի ու Գ.Առափելյանի փայաբաժինները, դառնում լիիրավ սեփականատեր և 1899թ. Մ.Արամյանցի հետ հիմնում «Ա.Ն. Մանթաշյանց և ընկ.» («А. И. Манташев и Ко») ֆիրման, որը վերածվեց նավթարդյունաբերական կայսրության. բավական է ասել, որ 10 տարի շարունակ (1899-1909) ընկերությունը հիմնադիր կապիտալի քանակով (22 մլն ռ.) ամենախոշորն էր ամբողջ նավթարդյունաբերությունում¹:

Առհասարակ Մանթաշյանց-մարդուն ըմբռնելու համար հարկ է հաշվի առնել, որ նա ուներ երեք հիմնարար արժեք՝ *ազգը, եկեղեցին և ընտանիքը*:

Ալ.Շիրվանզադեն գրել է. *«Գումարների ահագին քանակությունը չէր, որ առատաձեռնորեն զոհում էր նա բարեգործություն կոչված սրբազան տաճարին, որ երկրային տաճարների թագուհին է: Մի՛րտը՝ ահա այն, որ կատարում էր միակ դերը և վեհ դերը Մանթաշյանցի բարերարությունների մեջ: Նա տալիս էր առանց հետին հաշիվների, սին փառամոլության, տալիս էր, որովհետև այդպես էր թելադրում նրա զգայուն հոգին: Նրա բարերարությունը կրում էր բուն քրիստոնեության դրոշմ, որ աջ ձեռքը տալիս՝ ձախը չիմանա: Դա նրա համեստությունն էր, որ այնքա՛ն հազվագյուտ է ներկայումս: Հրապարակորեն հայտնի է նրա արած գործերի հազիվ մի մասը: Անթիվ անհամար են անհայտները, որոնց մասին միայն նրա մերձավորները գիտեին» [27]:*

1881թ. նա դարձավ «Կովկասյան հայոց բարեգործական ընկերության» հիմնադիրներից մեկը, հետագայում՝ վարչության փոխնախագահ և պատվավոր անդամ: Իսկ դա նշանակում էր, որ տարեկան պարտադիր մուծումներից բացի, Մանթաշյանցը պարբերաբար խոշոր նվիրատվություններ էր կատարում. ճիշտ 30 տարի...

1908թ. նա ընկերությանը միանվագ հատկացրեց 20 հազ. ռ., որի տարեկան շահութատոկոսները (900 ռ.) պիտի տրամադրվեին հայոց դպրոցներին: 1903թ. 50 հազ. ռուբլով վերանորոգեց Սբ.Աստվածածին մայր տաճարը (Վանքի եկեղեցին) և հարակից շենքը: 1904թ. ավելի քան 1,5 մլն ֆրանկով

¹ Նավթարդյունաբերությունում Ալ. Մանթաշյանցի դերի մասին ավելի մանրամասն տես մեր «Հայերը և Բաքուն» գիրքը, Ե., 2006թ.:

կառուցեց Փարիզի Սբ.Հովհաննես-Մկրտիչ հայոց եկեղեցին, ինչի համար ֆրանսիական կառավարության կողմից պարգևատրվեց Պատվո լեգեոնի շքանշանով: 1909թ. հատկացրեց 300 հազ. ռ., որով կառուցվեց Ներսիսյան ճեմարանի նոր, հոյակերտ շենքը: 1910թ. հատկացրեց 250 հազ. ռուբլի, ինչի շնորհիվ Սբ.Էջմիածնում կառուցվեց վեհարանի ներկայիս շենքը (1914թ.):

Մանթաշյանցն առանձնակի վերաբերմունք ուներ կրթության հանդեպ: 1881-1893թթ. եղավ Թիֆլիսի ռեալական գիմնազիայի, իսկ 1894-1907թթ.՝ նախագիմնազիայի պատվավոր հոգաբարձուն: 1894թ. հիմնեց իր անունը կրող Առևտրային դպրոցը, որը գոյատևեց մինչև 1918թ. և որտեղից կյանքի ուղեգիր ստացան հարյուրավոր պատանիներ:

Բացի այդ, առավել տաղանդավորներին, որոնց շատ անգամ ինքն էր անձամբ ընտրում, ուսումնառության էր ուղարկում Ռուսաստանի ու Եվրոպայի լավագույն բուհերը՝ ուսման ամբողջ ընթացքում հոգալով նրանց ծախսերը: Առ. Սարուխանը գրել է. *«Քանի՞ հայ երիտասարդ ուսում է առած Մանթաշյանցի հաշվով՝ ես չգիտեմ: Մանթաշյանցն ինքն էլ չէր իմանում: Ես կարծում եմ, թե առնվազն հազար երիտասարդի նա այս կամ այն ձևով միջոց է տված կանոնավոր ուսում առնելու և իրենց համար ապրուստի հաստատուն դիրք ստեղծելու: Ես անձամբ գոնե հարյուր հոգի ճանաչում եմ՝ բժիշկ, ուսուցչապետ կամ ուսուցիչ, ճարտարապետ, հանքաբան կամ այլ մասնագետ, որոնք իրենց ամբողջ ուսումը և դիրքը պարտական են Մանթաշյանցին»* [28, էջ169]:

Նրանցից մեկն էր Կոմիտասը, որն ինքնակենսագրությունում գրել է. *«1896 թվի մայիսին մեծանուն բարերար Ալեքսանդր Մանթաշյանցի ծախսով գնացի Բեռլին երաժշտական բարձրագույն ուսումնա լրացնելու»:*

Մանթաշյանցը մի «թուլություն» էլ ուներ. դա արվեստի ու գրականության հանդեպ սերն էր: Գերադասում էր հատկապես թատերարվեստը, ոչ միայն մշտապես թատրոն էր հաճախում, այլև կանոնավոր կերպով նյութապես օժանդակում էր թե՛ «Հայկական դրամատիկական ընկերությանը» և թե՛ առանձին դերասանների:

Ներկայիս Թբիլիսիի Շ.Ռուսթավելու անվան դրամատիկական թատրոնի շենքը նախկինում կոչվում էր «Փիթոնի թատրոն»: Մանթաշյանցը, որ Եսայի Փիթոյանի «Ի.Ե. Փիթոն» առևտրային և նավթարդյունաբերական ընկերության վարչության անդամն ու ամենախոշոր բաժնետերն էր, ֆիրմայի անունով սկսեց կառուցել թատրոնը և ծախսեց 1,5 մլն ռուբլի:

Տեղին է անդրադառնալ նաև Մանթաշյանցի բնավորությանը: Բոլոր ժամանակակիցները միաբերան ընդգծում են նրա համեստությունը: Նույն

Առ. Սարուխանը գրում է. «Նա համեստ մարդ էր և ապրում էր շատ համեստ: Նա գոհարեղեն չէր սիրում և երբեք չէր գործածում ոչ մատանի, ոչ փողկապի վրա և ոչ առհասարակ որևէ զարդ: Նրա ժամացույցն էլ շատ պարզ էր և պարզ շղթայով: Միակ զարդը, որ սիրում էր կրել, կենդանի ծաղիկ էր: Նա երբեք չուզեց իր սեփական կառքն ունենալ. նա միշտ կամ ոտքով էր պտտում, կամ տրամվայով: Հազվագյուտ առիթներով միայն կառք էր վարձում» [28, էջ 189]: Սա ձևականություն չէր. ձիավույծ կառքն արժեր 25 ռ., սակայն Մանթաշյանցը համարում էր, որ քանի դեռ Թիֆլիսում կան աղքատ հայեր, գաղթականներ՝ ինքն իրավունք չունի զեխություն անել, դա անկիրթ, անբարոյական վարմունք է:

Մի ուսանելի հատկություն էլ ուներ. չնայած աշխարհն ու վայելքները փռված էին առջևը, սակայն անհունորեն նվիրված էր ընտանիքին, կնոջը և ուր երեխաներին: Կինը մահացավ շաքարախտից, Ֆրանկֆուրտում, և Մանթաշյանցը կողակցի աճյունը հողին հանձնեց Վանքի եկեղեցու գավթում: Ինքը՝ Մանթաշյանցը, տառապում էր երիկամների հիվանդությունից և ականջացավից, ու մի քանի ամիս տևող փարիզյան այցելությունների ժամանակ նաև բուժում էր ստանում: 1911թ. զարնանը նա մեկնեց Պետերբուրգ, որպեսզի այնտեղից ճանապարհվեր Փարիզ, սակայն չհասցրեց, վախճանվեց ապրիլի 19-ին: Դին ապրիլի 24-ին տեղափոխեցին Թիֆլիս, իսկ թաղումը կատարվեց ապրիլի 30-ին: Դա Թիֆլիսի ամենահանդիսավոր սգո արարողությունն էր, որին ներկա էր քաղաքի ողջ հասարակությունը:

Մանթաշյանցին թաղեցին կնոջ կողքին՝ Վանքի եկեղեցու գավթում: Սակայն այսօր Թիֆլիսիում մի փնտրեք նրա գերեզմանը, նա գերեզման չունի. 1938թ. ավերվեց Վանքի եկեղեցին, և հողին հավասարեցվեցին ոչ միայն Մանթաշյանցի ու նրա կնոջ, այլև Թիֆլիսի մյուս նշանավոր հայ գործիչների՝ Մ.Լորիս-Մելիքովի, Ա.Տեր-Ղուկասյանի, Հովհ. Լազարյանի, Մ.Սանասարյանի, Բ.Շելկովնիկյանի, Պ.Բզմիրյանի և այլոց աճյունները:

1914թ. Առաջին աշխարհամարտով սկիզբ դրվեց հայոց ողբերգությանը:

1918թ., ձգտելով փրկվել խորտակվող անդրկովկասյան նավից, Վրաստանը նստեց իր մակույկը, իսկ Թիֆլիսից վոնդվեց դարեր շարունակ մեծամասնություն կազմող հայ տարրի հասարակական-քաղաքական, տնտեսական, մշակութային սերուցքը:

Հունվար, 2008թ.

Աղբյուրներ և գրականություն

1. «Արթոր»-ի պատկերազարդ օրացույց 1895, Բաքու, 1894:
2. *Շարապետյան Ս.*, Թիֆլիսի քաղաքագլուխները, Ե., 2003:
3. *Բշխանեան Բ.*, Վիճակագրական ուսումնասիրություն անդրկովկասեան ժողովուրդների, Բաքու, 1919:
4. *Вейденбаум Е.*, Путеводитель по Кавказу, Тиф., 1888.
5. *Պետրոսյան Ա.*, Սոքալաքները հայ-վրացական տնտեսական-քաղաքական հարաբերություններում, ԼՀԳ, թ. 12:
6. Братская помощь пострадавшим в Турции армянам, М., 1897.
7. *Դ.Անանուն*, Ռուսահայերի հասարակական զարգացումը XIX դարում (1800-1870), հտ. Ա, Թիֆլիս, 1916:
8. Кавказский календарь на 1850 год, Тиф., 1849.
9. Кавказский календарь на 1846 год, Тиф., 1845.
10. Кавказский календарь на 1852 год, Тиф., 1851.
11. Кавказский календарь на 1854 год, Тиф., 1853.
12. Кавказский календарь на 1858 год, Тиф., 1857.
13. Сборник сведений о Кавказе, т. VI, Тиф., 1880.
14. Кавказский календарь на 1908 год, Тиф., 1907.
15. Устав Тифлисского коммерческого банка, Тиф., 1894.
16. Устав Тифлисского общества взаимного кредита, Тиф., 1872.
17. Устав Тифлисского купеческого банка, Тиф., 1913.
18. Кавказский календарь на 1883 год, Тиф., 1882.
19. *Макаров А.*, Закавказье в торговом отношении, М., 1884.
20. Кавказский календарь на 1882 год, Тиф., 1881.
21. Кавказский календарь на 1890 год, Тиф., 1889.
22. *Нейман М.*, Армяне. Краткий очерк из истории и современного положения, СПб., 1899.
23. *Դ.Անանուն*, Ռուսահայերի հասարակական զարգացումը (1870-1900), հտ. Բ, Էջմիածին, 1922:
24. Тифлисский муниципальный календарь на 1917г., Тиф., 1917.
25. Б.Ишханян, Народности Кавказа. Состав населения, профессиональная группировка и общественное расселение кавказских народностей, Пгр., 1917.
26. Кавказский календарь на 1866 год, Тиф., 1865.
27. «Հորիզոն», թ. 82, 1911:
28. *Մարտիրոսյան Առ.*, Աղեքաանդր Մանթաշեանց մեծ վաճառականն ու բարեգործը, Վիեննա, 1931:

ТОРГОВО-ЭКОНОМИЧЕСКОЕ ПРИСУТСТВИЕ АРМЯН В ТИФЛИСЕ (позднее средневековье – 1918г.)

Хачатур Дадаян

Резюме

Торговля и ремесла – урбанистические явления, поэтому нет ничего удивительного в том, что, в отличие от грузин, в основном живущих в селах, имеющие многовековые экономические традиции армяне превратили городок Тифлис в крупный центр, составляя абсолютное большинство населения. Со вступлением Грузии в состав Российской империи (1801г.) экономическое положение резко изменилось: русская власть и войско не только явились заказчиками товаров и услуг, но и платили за них. Оказавшись в едином государственном, экономическом, правовом пространстве и откликаясь на рыночный спрос, армяне быстрыми темпами начали создавать новые отрасли производства и промышленности. Занимая доминирующее положение в экономике и владея многими соответствующими рычагами (торговля, финансово-кредитные учреждения, кожевенное производство, табачная промышленность и т.д.), они долгие десятилетия руководили созданным ими самими городом, благоустраивали его, строили дома и здания общественного назначения, театры, школы, церкви.

Первая мировая война, турецкая интервенция в Закавказье, появление грузинского «национального самосознания» и последующие исторические события внесли коренные изменения – армянский национальный капитал, общественно-политическая и культурная элита подверглись «депортации» и оставили после себя лишь руины былого знаменательного присутствия.